


Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Գլխվիլէճա, Օհայօ



ST. GREGORY OF NAREK
ARMENIAN APOST. CHURCH

666 Richmond Road
Cleveland, Ohio 44143, U.S.A.

Հովիւ † ԱՊՍՏՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ

Տ.Տիրան ԲՀՆՅ. Փափագեան

Area Code 216—Tel. 381-6590

PASTOR-VERY REV. † ԱՊՍՏՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ

16 Մարտ, 1973

Մեծապատիւ Տիրար ձէք Անդրէասեան,
Դիւանապետ Առաջնորդարանին Հայոց
Որ ի նիւ Եորկ, Ն.Ե.,

Սիրելի ձէք,

Մարտ 13, 1973 թուակրով նամակդ այսօր ձեռքս անցաւ, եւ այսօր ալ կը պատասխանեմ անոր: Յուսամ մասնաւոր դժուարութիւն մը յարուցած չեմ ըլլար քեզի եթէ գրելիքս Հայերէնով գրեմ, քանի որ այդպէս ընելով աւելի արագ կերպով կը կարողանամ պատասխանը դրկել քեզի, առանց անհարկի սպասումներու մեքենագրող գտնելու համար եւն: Սուրէնը իբրեւ Հայերէնի Դիւանադպիր կրնայ քեզի օգտակար ըլլալ իբրեւ թարգմանող կամ վերծանող նամակիս:


Նախ եւ առաջ զարմանքս կուզեմ յայտնել նամակիդ համար: Արդարեւ զարմանքս մեծ եղաւ անոր պարունակութեան վերահասու ըլլալով: Ինծի ետ ճամբած ես ցուցակ մը զայն նամակ նկատելով: Խնդրոյ առարկայ այդ ցուցակը վերստին կը ներփակեմ սոյն նամակով եւ կը խնդրեմ որ անգամ մը եւս աչքէ անցնես զայն, համոզուելու համար որ նամակ մը չէ անիկա: Ամեն թուղթի կտոր "Առ Որ Անկ է" սկսելով եւ տակն ալ ստորագրութիւն մը պակցնելով նամակ չըլլար: Գիտենք պատշաճութիւնները պաշտօնական թղթակցութեանց, եւ միշտ ալ յարգած ենք այդ պատշաճութիւնները:

Ես պաշտօնապէս առաջին առիթով իսկ գրած եմ 6 փետրուար, 1973 թուակրով նամակս եւ զայն դրկած ուղղակի Առաջնորդ Սրբազանին անունին, մեր գումարած Տարեկան Ծխական Ժողովի նկատմամբ հարկ եղած բոլոր տեղեկութիւնները տալով: Սոյն յիշած նամակս Առաջնորդարանի արխիւներուն մէջ է անշուշտ, բայց որպէս զի ձեր գործը դիւրացուցած ըլլամ, անոր պատճէնը "զիրաքս" ընելով օրինակ մը կը ներփակեմ ներկայիս:

Աւելի վերջը երբ Տեղեկագիրները ամբողջապէս պատրաստ եղան, այն ատեն զանոնք եւս դրկեցի Առաջնորդարան առանցին պահարանով մը, եւ ձեր գործնալ ալ շատ փոքրիկ չափով մը դիւրացնելու համար զատ թուղթի մը վրան ալ ցանկագրեցի կամ ցուցակագրեցի պահարանին մէջը գտնուող նիւթերու պարունակութիւնը որպէս զի մէկ նայուածքով գիտնաք թէ ինչեր ներփակուած են: Նկատելով որ Տարեկան Տեղեկագիրներու պատրաստութիւնը ժամանակ կառնէ, ուստի այդ պատճառով նամակը կանխաւ դրկած եմ: Ասկէ առաջ, 15 տարի է ի վեր այս գործնական ձեւին հետեւած եմ եւ երբեք առարկութիւն մը չէ եղած կիրարկուած այս ձեւին մասին, եւ հիմակ առաջին անգամն է որ դիտողութիւն կ'ըլլայ այդ մասին:

Արդ չեմ հասկնար թէ ինչ ըսել ուզած ես քու այս վերջին նամակովդ: Պարզապէս ինծի համար անըմբռնելի մնաց նամակիդ միտ բանին: Եթէ առարկութիւնը վերոյիշեալ նօթին վրայ մակագրուած "Առ Որ Անկ է" ձեւին դէմ է, ըսի որ նամակ մը չէ անիկա, այլ պարզապէս պահարանի մը մէջ գտնուած նիւթերու պարունակութեան ցուցակագրութիւնն է առ ի յիշեցում, ինչպէս կը տեսնէք, եւ այդքան միայն: Այդ թուղթի կտորը ետ ճամբուած, է ինծի եւ կը պահանջուի որ ուրիշ նամակ մը գրեմ: Զեմ հասկնար թէ ինչ նամակ է ինչմէ ուզուածը: Ես արդէն պաշտօնական նամակը գրեմ եմ, ինչպէս վերեւ

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻ
Գլխավէնտ, Օհայօ



ST. GREGORY OF NAREK
ARMENIAN APOST. CHURCH
666 Richmond Road
Cleveland, Ohio 44143, U.S.A.

Հովիւ † ԱՐՏԻՍԿՐԱՅԻՄ ԳԻՄՆԱՆՆԵՐԻ

Area Code 216—Tel. 381-6590

PASTOR-VERY REV. † ARSHAG KHATCHADOURIAN

(Ծարձակութիւն)

յիշեցի, Առաջնորդին անունին քով թերեւս հարկ էր յիշել նորին Սրբազնութեան Թեմական Խորհուրդի նախագահ ըլլալու հանգամանքը եւս, բայց այդ փոքրիկ մոռացումին համար նոր նամակ մը գրելու անհրաժեշտութիւնը չեմ տեսներ: Առաջնորդին ղրկուած նամակները եթէ պաշտօնական են, բնական է որ կը ղրկուին իրեն իր բոլոր հանգամանքներուն մէջ, ընդ որս նաեւ իբրեւ նախագահ Թեմական Խորհուրդի, եթէ տուեալ հարցերը իրենց իրաւասութեան կապուած են, այսինքն Թեմական Խորհուրդը հետաքրքրող հարցեր են: Իսկ ղրկուած Տարեկան Տեղեկագիրները բոլորը ալ կարգ կանոնով պատրաստուած են եւ ստորագրուած պատասխանատու անձանց կողմէ համաձայն իրենց պաշտօններուն, ըլլալ Տարեկան Ժողովին Ատենագրութիւնը, ըլլալ Առաջնորդարանի կողմէ ղրկուած Տարեկան Տեղեկագիրներու "Յորմ"ը եւ կամ ըլլալ Եկեղեցւոյ ելեւտական հաշիւետուութիւնը:

Իսկ գալով ձեր դիտողութեան նոր Ծխական Խորհուրդի նոր դիւանի ընտրութեանց եւ նոր Ծխական Խորհուրդի պաշտօնի ձեռնարկման հարցերու շուրջ, ըսեմ միջապէս որ այդ բանին մէջ եւս թիւրիմացութեան մատնուած կը թուիք ըլլալ: Ճիշդ է որ նոր դիւանի ընտրութիւն կատարուած է, բայց միւս կողմէ հին Ծխական Խորհուրդը իր դիւանի հին կազմով իր պաշտօնավարութիւնը նոյնութեամբ կը շարունակէ ըստ առաջնոյն, սպասելով որ Առաջնորդէն վաւերացում գայ նոր ընտրութիւնը հաստատող եւ ապա նոր Ծխական Խորհուրդի կազմը պաշտօնի անցնի պաշտօնապէս: Ինչ անպատեհութիւն կայ նոր դիւանի ընտրութեան մէջ, եթէ մենք ինչ իր հին ձեւովը կընթանայ եւ նորը չի պաշտօնավարեր: Ասկէ առաջ եւս միշտ այսպէս եղած է եւ ցորդ ոչ մէկ աւարկութիւն չէ եղած: Որքան որ տեղեկ եմ բոլոր ծուխերն ալ այս գործնական ձեւին կը հետեւին: Իսկ եթէ ձեւը կուզուի փոխել յետ այսու, այդ պարագային լաւ կըլլայ որ առաջուց մեզի պաշտօնական հրահանգ ղրկուի եւ մենք ալ այն ատեն ըստ այնմ կը վերաբերուինք:

Եթէ ներկայ բացատրականը չի գոհացներ ձեզ, այն ատեն պիտի խնդրէի ձեզմէ որ աւելի պարզ բառերով եւ "քանքրիթ" տուեալներով բացատրէիք ինծի ձեր միտքը: Կը ցաւիմ որ ես չկրցայ ըմբռնել ձեր ինչ ըսել ուզածը եւ ձեր ինչ ուզածը ինձմէ:

Ես բարեմիտօրէն կը յուսամ որ սոյն տրուած բացատրութիւնները բաւարար կը նկատուին եւ մենք կստանանք շուտով նոր ընտրութեանց վաւերացումը Առաջնորդէն: Ձեզ ծում մը եւ ապօրինութիւն մը չէ եղած որ այսքան ձգտեալ ձգտուի վաւերացումը: Կը ցաւիմ ըսելու ~~որ~~ միայն որ այս ձգտումները եւ աւելորդ պատճառաբանութիւնները գործերու կաղացման միայն կը նպաստեն եւ բարոյալքման պատճառ կըլլան նոր եռանդով ծուխին գլուխը եկող մարդոց: Կաղաչեմ որ նոր ընտրութեանց վաւերացումը աւելի եւս չուշանայ, եթէ կուզուի որ ներդաշնակ գործունէութիւն տարուի արդէն իսկ բաժան-բաժան եղած այս ծուխէն ներս:

Աղօթարար
Արտիսկրայիմ Գիմնաների
Տ. Տիրան ԲՏՆԵՅ. Փափագեան,
Հովիւ